



20. ՍԵՖԻԼ ՄԱՐԿՈՍ

Կար-չըկար ավալ ժամանակ մե մարթ, մե կնիյ կար, դեանք շատ խեղճութան մեջ էն էր: Օրերեն մե օր կնիյն ասաց. «Ա՛յ մարթ, պոլ ի մենք խեղճութոն քյաչենք, մե աստըվորը մե աստըվոր չի, ըստեաղ բան չըկա անեյու, քելի չհարները ախշատի՛, էդ մեր թփըլները պախենք»:

Մարթն ասաց.—Քյո կաթն հարամ ըլի, դու ուզես ես ընձի օղորկես դարիպութոն, որ դու լրբութոն անես:

Կնիյն ասաց.—Ա՛յ մարթ, ես վատա եմ դնելի Աստու խետ, որ իմ խալալին խարամ չըխառնեմ, չանքի օրն գերեզմանին:

Մարթը դյուս էլավ, դյուսը տըսավ. իչ մե պառավ կնիկ ժողովք անելի, ասաց.—Ա՛յ նանա, ցերեկը խա՛ց ժողվի, գչերը հարի իմ տունը քընի՛, մըղյաթ ել իմ կնկան, ես էթաս եմ դարիպութոն, չըլի որ իմ կնիկը լրբութոն անի. դարիպութոնեն որ դարձամ, էկամ, քեզի շատ լավ կըշախեմ:

Սեֆիլ Մարկոսն էկավ տուն, հյուր կնկան ասաց.—Կնի՛կ, տըսնես ես էս պառավը, դեարը ջոջ եմ դնելի էդ տան վրան. էդ կըլի քյո կսիրը, դյու՛ դեարը խարս, մնա՛ս բարի, կյո ես էթաս եմ:

Չարխըները խագավ, խաց կապեց մեչքը, փետն առավ ձեռքը, ընկյավ ճամբախ:

Թող Աստված դեար խետն ըլի, մենք դառնանք Սեֆիլ Մարկոսի կնկան: Գչեր-ցերեկ դեար աչկեն արսունքը չէր կտըովելի, խեղճ տղները քաղցած օր էն էր անց կացընելի: Էդ պառավը մե քյանի օր լավ շախեց տղներին. էթաս էր խաց էր ժողվելի, բերես էր, ուտես էր մի դարի տակ, էդ թփըլներին չէր էր տալի:

Մեյ օր էդ թփըլները շատ քաղցածացան, էդ խեղճ կնկա իլաճը կտովավ, ասաց.—Մի՛ լացեք, պալաններ, կըլեմ, թոնդիրը կըվառեմ, ձեզ խըմա խորակ կեփեմ:

Ճժերը ուրախացան, էդ կնիյն էլավ, թոնդիրը վառեց, տըղներին խափեց, օղորկեց դյուսը. գինքն էլավ. էն մանտըր քարերեն ժողվեց, բերեց, լցեց պտուկի մեջը, դրեց թոնդրա վրա, գինքն էլ մտավ մի պուճախ, չոքը տվեց գետինը, Ասծուն աղաչեց, ասաց. «Ասվա՛ծ, դու խասնես իմ պալաններին, էդ ինչ ի մեր քյաչած աստըվորը»:

Շատ լաց էլավ: Ճժերն էլ հա իգյաս էն էր, ասես էն էր. «Մամա՛, պա ի՞նչ էլավ մեր խորակը»: էդ կնիյն էլ ասես էր. «Մրկա կեփվի, մեկ սըհաթ կեփվի»: էդ խեղճ էրեխեքը հնքան մնացին քաղցած, էկան ամեն մեկ կողմ պարզվան, քնան: էդ կնիյն էլ հա լաց էր ըլե-լի, ասես էր. «Աստվա՛ծ, ես ի՞շխո անեմ իմ պալաների խետ. իմ ձեռնեն չի գյալի էթամ, ժողովք անեմ. իմ ձեռը թալիր իմ քյո փեշը, կուզես՝ պախի՛, կուզես՝ մեռցո՛ւ»: Զինքն էլ գլուխը դրեց, քընավ: Առատունը լոսը բացվավ. էլավ, զատ ու մատերը ժողվեց, տըսավ բարձի տակը օխտը խատ ոսկի. էլավ, ուրախ-ուրախ լվացվավ, ասաց. «Փա՛ռք քեզի, Ասված, որ դյու իմ քորփա նապալաղներին ըռուզա խասուցիր:

էկավ, պառավին ասաց.—Մամա՛, ել էդ ոսկին ա՛ռ, քելի՛ պա-զարը, խաց ա՛ռ, բե՛ր, որ իմ տղներն ուտեն:

Ասաց.—Ախչի՛, էդ ոսկին վեա՞վ ի տվի քեզի:

էդ կնիյն ասաց.—Աստված ըռուզկա ի խասուցի ընձի:

Պառավը ասաց.—Դեռ մե բան կա. քյո խեղճ մարթն ասես էր, ես չեմ էր հավատալի, որ դյու լըբուլթոն կանես:

—Մամա՛, վարսքդ սըվտըկիր ի, խոքուդ մեղք մի՛ արա, ես իմ մարթու խետ վատա Աստըծու եմ դրի, որ իմ խալալին խարամ չը-խառնեմ, ինչանքի գերեզման մտնելը, թե չես հավատալի, կանոխ գչերը հարի՛, իմ մոտը քընի:

էդ պառավ էլավ, մըրմըռթալով առավ ոսկին, գնաց պազարը, խաց-մաց առավ, բերեց: Տղները էկան, նստան ու կերան: Ասաց. «Մամա՛, դյու էլ ժողովք մի՛ արա, դյու էդ տան ճոչն ես: Աստված ըռուզկա ի տվի, կուտենք, փառք կըտանք հյուրը»:

Պառավն ասաց.—Լաո՛, ես քյո գյողուլթոն կըբռնեմ:

Ասաց.—Մամա՛, թող քյո ասածն ըլի:

Իրիկունը էկավ, տեղները քըցին, քընան. էդ պառավն էլ էլ էդ կնկյա կուշտը քընավ, ընչար իլոս դարավուլ քաշեց: Լոսը բացվավ. էդ կնիկը էլավ, տեղաշորերը ժողվեց, ասաց. «Մամա՛, դյու բարձր վե՛րց»:

Պառավը բարձր վերցեց, ըչկաց՝ ինչ ի՞. օխտը ոսկի. կնիկյն ասաց. «Մամա՛, աչկովդ տըսա՞ր»: «Ո՜ւա՛, պալա՛մ, դյու արդար ես»:

էդ կնկյա Աստըծո խրամանքով օրը հա օխտը ոսկի էկավ, դու-վաթ կապեց, տներ չինեց, կովեր առավ. էլ չես էր գինալի, թե էդ Սեֆիլ Մարկոսի տներն ի:

էդ Սեֆիլ Մարկոսն էլ դարիպուլթոնից ետ էր դառնալի, իգյա-լի տուն: էկավ, տըսավ. «Ջա՛նըմ, էդ իմ տների տեղն ի, իմ տնե-րը չի,—ասաց,—յավաչ, մե մտնեմ, խարցուցեմ, վեա՞վի գինալի,

պալքիմ իմ կնիյն անճարի էլի, ծախիրի, կերիրի, հուրիչն էկիրի, տուն ի չինի տեաղ. մեկ դաֆիլ մտնեմ, վայ թե ջրոտվեն»: Քյուչայի դուռը թփեց, մե տղա դյուս էլավ, ասաց. «էդ վեա՞վի»: Ասաց. «Դյո՛ւս հարի, դարիպ մարթ եմ»:

Ասաց.—էդ վի՞ր տներն ի:

Ասաց.—Սեֆիլ Մարկոսի:

Ասաց.—Սեֆիլ Մարկոսի տո՞ւնն ի:

Ասաց.—Ձէ՛, էդ խիյ տարի ի գնացիր ի դարիպութոն, տըսնե՞ս ես, էդ զըմեն Սեֆիլ Մարկոսի կնիյն ի չինի:

Ասաց.—Պա դյու Սեֆիլ Մարկոսի ի՞նչ ես:

—Դեար նոքարն եմ:

—Սեֆիլ Մարկոսը տղա ունի՞:

—Իչխո չունի, կյո էթաս են վարժատունը, կարդաս են, էրկու տղա, մե ախչիկ ունի:

Ասաց.—Պա վեա՞վ կա տունը:

Ասաց.—Պատի խանըմն ի:

Դեարը օղորկեց, ասաց.—Դե՛, քելի՛, խանըմիդ ասա՛՜ Սեֆիլ Մարկոսն էկիր ի:

Ջինքը հյուրը ասաց. «Ոնում կաթնակերին էյթիբար չըկա. լոբու-թուն ի արի. ես դեարը չանց կըտամ մկա»:

Նոքարը գնաց, ասաց. «Ոնանըմ, աչքըդ լո՛ւս, մարթդ էկիրի ի քյուչայի դուռը, ասելի՛ ես Սեֆիլ Մարկոսն եմ»:

Կնիյն ուրախ-ուրախ էլավ, վագկեց, ըչկաց, որ հյուր մարթն ի, փաթըթվավ մարթի վըզովը.—Դյու բարյով էկար. ընչի՞ չես էր մըտնելի տունը:

Ասաց.—Իչ մտնեմ էր. ասեմ, ես Սեֆիլ Մարկոսն եմ. էդ իմ տների տեղն ի, իմ տները չի, մնացիմ ջանիս վրա չվար, դեար խըմա էլ քյուչայի դուռը թփիմ, ասիմ. «Վեա՞վ ի նալի, կնիկս նաչար ի մնացի, ծախիր ի»:

Կնիյն ասաց.—Ա՛յ մարթ, տըսնաս ես, դյու գնացիր դարիպու-թոն, ես էս դտար մալ ու դովվաթ եմ բերի:

Ասաց.—Կյո ես էլ եմ բերի ֆլան մեչայի մեջն ի, յարի, էրկսով էթանք, բերենք:

Կնիյն էլ ուրախ-ուրախ ելավ, մարթի խետը ընկյան ճանբախ, գնացին էդ մեչի մեջը:

Ասաց.—Ղանճըլս, քյո սիրողն ի էդ մալ-դովվաթը քըցի քեզ խըմա. խո ընձ էլ սիրող չունեմ, ես էլ խիվանդացամ, չըգիցամ աչխատել:

էդ կնիյն էլ ասաց.—Մա՛րթ Աստըծու, էդենց բաներ մի՛ ասա

ընձի, ես քեզ խեղ վատա Աստըծու եմ դրի, որ իմ խալալին խարամ չըխառնեմ չանքի օրն գերեզմանին:

Մարթն ասաց.—Քյո կաթը խարամ ըլի, պա դյու էդ բանեն խապար չես, վեալ էդ փողերը տվի քեզի, որ դյու էդ զգար մալ ու դյովաթ ես հետ քցի. ես տեաղ ըլելուս վախտը ախշատանք եմ էր անելի, չատ օրը քաղցած ենք էր քընելի, դյու էդ կնիկ հալովդ վեա՞ր տեղեն ես ախշատի:

Կնիյն ասեց.—Աստված ընձի, իմ պալաններին ուռուզկալ ի տվի. օրական օխտը ոսկի ի գյալի ընձի, գինաս ես, ա՛յ մարթ, ինչ խեղճու-թոն, նաչարութոն իմ քյաչի եմ պալանների խեղ, իմ աչկերի արսու-քը չի կտովելի. մեյ օր էն դտի քաղցած մնացին տղներս, իլաճս կտովալ, դեանցը խափիմ, օղորկիմ դյուսը, էլամ, թոնդիրը վառիմ, էն չայլաղի մանտը քարերեն ժողվիմ, լցիմ պտուկը, դրիմ թոնդրա վրա հա, գընացին էկան. «Մամա՛, էդ ինչ ես էփելի», ասես եմ էր. «Պալա՛մ, գնացեք խաղացե՛ք»: էն դտի խափիմ չանք իրիկուն. իլաճները կտովալ, ամեկը մե տեղ թավալան, քընան. էն գչեր սև էլալ ընձ խըմա. չանքի լոս աչքիս արսունքը չըկտովալ, առատունը էլամ, իչկացիմ, չորերը ժողվեմ էր, տըսամ բարձի տակը՝ ի՞նչ, օխտը ոսկի կա, ուրախ-ուրախ վերցիմ, մամային ասիմ. «Մամա՛, ե՛լ, Աստված մեզ ըռուզկա ի տվի», մաման էլ չըխալատաց ընձի, իշխո դյու ասես ես. «Սիրող ես բռնի»: Ասիմ. «Մամա՛, թե չես խալատա-լի, կանոխ գչեր էլ դյու հարի քընի՛ մոտս»: էկալ էն գչեր ինչանքի լոս դարավուլ քյաչեց, առատունը լոսը բացվալ, պառալը հյուրը ձեռքով չորերը ժողվեց, իչկաց օխտը ոսկին կա, ասաց. «Պալա՛, դյու արդար ես, Աստված քյո պալաններին ըռուզկա ի խասուցի»:

Մարթն ասաց.—Ձէ՛, քյո կաթն խարամ ըլի, կնկանը էհտիպար չըկա, քեզ կտի սպանեմ:

Ասաց.—Ընձի սպանես, պա իմ պալաններին խաթը չըկա՞:

Մարթն ասաց.—Ձուրցալու տեղ չըկա էլ:

Ձեռը ճխտեց, ճեպեն չաղուն խանեց, կնիկը դրեց գետինը, վիզը կիսակոնեց, զինքը թողեց էկալ տունը:

Թող էդ կնիկը էդ մեչայի մեջը մնա, Սեֆիլ Մարկոսն էկալ տու-նը, իր տղները, մեկ էլ պառալը ուրախ-ուրախ էկան առաջը:

Ասաց Մարկոսը. «Իմանալդ պառա՛վ, քեզ իմ տան վրան դրիմ դարավուլ, որ ըղե՞նց պախես էր իմ կնկյան»:

Պառալն ասաց.—Ընչի՞, պալա՛ս:

Ասաց.—Քյաֆթա՛ր, էդ դտը մալ ու դովաթ վեա՞վ էր տվի ձեզի:

—Պալա՛մ,—ասաց,—Աստված քյո կնկյա աղոթքը լսեց, քյո պալաններին ըռուզկա տվեց, դյո՛ւ էն ասա՛, խանմըս Հյո՞ւր ի:

Ասաց.—Քեզ էլ կրտանեմ դեար կուշտը:

Ասաց.—Ի՞նչ խո դեար կուշտը:

—Կյո՛, —ասաց,—տըսնես ես էն մեշան, տարամ դեաղ, վիզը կոխմ:

—Ընչի՞, —ասաց,—անաստվա՛ծ, Աստված քեզի կանիծի, էն արդար էր:

Էրեխեքը լաս էն էր.—Դադա՛, մեր մաման ի՞նչ արիր:

Դեանք թող դեաղ մնան, մենք էթանք Սեֆիլ Մարկոսի կնկյան: Դյար վիզը որ կոիր են էր, անմախական ախպուր էր բացվի, էլիր էր մե պատի առու, ընկիր էր էդ մեշայի մեջով էթաս էր:

Օրերեն մեկ օր մե բազրկյան էկավ, էջավ էդ մեշայի մեջը, Հյուր նոքյարներին ասաց.—Ըս տաղրանքը մե չո՛ւտ էկեք, յարա՛պ, առու-մառու չըկա՞. էդ էրկու աղունիկը մորե՛ք, լվացեք էփե՛ք, ուտենք:

Նոքյարները չուտ էկան, տըսան՝ ի՞նչ, մե պատի առու:

Աղունիկը մորթին, ուզես են էր, լվան էր, սաղացավ, թռավ:

Մնացին չվարած, էկան բազրկյանին ասին:

Բազրկյանն ասաց.—Քելե՛ք, էդ ախպրի ակը գըտեք, տըսեք վեա՞ր տեղ ի: էլան, կննացին, տըսան՝ ի՞նչ, մե կնիկ վիզը կոիր են, Հյուրն էլիր ի ախպուր, էթալի: էկան բազրկյանին ասին:

էդ բազրկյանն էլ էլավ, գընաց, տըսավ՝ ի՞նչ, մե կնիկ, չուտես, չըխմես, դեարը խորոտուլթան թամաշա անես, իշխո քնուկ ըլի: Բոնեց, վիզը ճխտեց իրարու վրա, Աստու խրամանքով փոշտաց, էլավ նստավ, ասաց. «Ախպե՛ր ջան, ընձի ի՞նչ տեյին սաղցուցիր, կնի՞յ տեյին, քյո՞ւր տեյին, թե՞ մեր տեյին»:

Բազրկյանն ասաց.—Սաղցուցիմ, որ ես քեզ առնեմ:

Կնիյն ասաց.—Ես իմ մարթի խետ վատա Աստըծու եմ դրի, որ իմ խալալին խարամ չըխառնեմ, ընչանքի գերեզման մտնելը, կուզես՝ տար թա՛լ մեկ խորի մեջ:

Բազրկյանն էդ կնկյան վերցեց, տարավ թալեց մե խորի մեջ, գինքը թողեց գնաց:

Աստըծու խրամանքով մե թուլա է փեյտա էկեր էդ մեշայի մեջը, խաց ու մաց էր ժողվելի, բերելի, թալելի էդ խորի մեջը:

Մե քյանի օր էդենց յոլա էր էթալի:

Օրերեն մեկ օր մեկ բազրկյան էլ էկավ, էջավ էդ մեշան. էդ սանդուխի թուլան էլ գընաց դեանցը զատամանց կայնեց, թամաշա արաց: Բազրկյանն էլ ասաց. «Ո՞ւսն է թալեք, խափխըփելով բռնեք»: Ո՞ւսն է թալին, թուլան առավ, փախավ:

Բագրկյանն ասաց.— Դուլա՛, իշխո ասես էդ տեղրանքը բան կա, որ խացը վերցելի, փախնելի:

Կյատանները դեար քյամակեն գընացին, ըչկացին՝ ի՞նչ. էդ թուլան մե խորի վրա կայնիր ի, կըզմըստալի, էկան, ասին:

Բագրկյանն ասաց.— Քելե՛ք, ըչկացե՛ք, բալքի դեանց դելը ընկիր ի խորի մեջը:

Սաթըլը վերցին, գընացին կախին էդ խորի մեջը: Էդ կնիկը էլավ, նստավ մեջը, դեանք քյաչին, խորեն խանին, ըչկացին՝ ի՞նչ, մե կնիկ, վազելով էկն, ասին. «Աղա՛, էսենց մե կնիկ, որ չուտես, չըխմես, դեարը թամաշա անես»:

Ասաց.— Իշխո՛, դուլա, խո քյո՞ւռ չի:

Ասին.— Չէ՛, ի՞նչ քյոռ:

Ասաց.— Էդ վեար անաստվածն է բերի, քցի:

Բագրկյանը զինքն էլ էկավ, ըչկաց՝ ի՞նչ, մե կնիկ ի: Ոնելը գլխեն գընաց:

Էդ կնիյն ասաց.— Աղբե՛ր ջան, ընձի ի՞նչ տեյին խանիր, քյո՞ւր տեյին, մե՞ր տեյին, թե՞ կնիկ տեյին:

Ասաց.— Ես քեզ խանել տվիմ, որ քեզ առնեմ:

Ասաց.— Չէ՛, ես իմ մարթու խետ վատա Աստըծու եմ դրի, որ իմ խալալին խարամ չառնեմ, ընչանք ի գերեզման մտնելը, իշխո խանիր խորեն, էլ ընձի թա՛լ խոր:

Բագրկյանը վերցեց դեարը, տարավ թալեց ծովը:

Մե խալեոր մարթ էլ թոռ էր քցելի ծովը, տըսավ, որ ի՞նչ. էդ բագրկյանն էդ կնիկը թալեց ծովը. զինքը թողեց գընաց:

Էդ խալեորը խասավ, էդ կնկյան ծովեն խանեց:

Ասաց.— Պապի՛ ջան, ընձի ի՞նչ տեյին խանիր:

Ասաց.— Օխտը քյոռ ախչիկ ունեմ, մեկ էլ դյու ութը թող ըլի:

Ասաց.— Պապի՛ ջան, դե՛, քելի էթանք, ընձի ըռուզկյա ունեմ, ես կըպախեմ քյո ախչիկներն էլ, քեզ էլ:

Դեանք էլան, գընացին տունը, խալիվորը վերցեց, ասաց. «Պալանե՛ր, ձեզ մե դադո էլ եմ բերի»:

Ասին.— Ուա՛, մեզի չատ պախիր, մնաց որ դեալը պախես:

Ասաց.— Աստված կըպախի:

Էդ գչերը քնան, ելավ, տըսավ, որ օխտը ոսկի էլի կա բարձի տակը, խանեց, մե էրկու ոսկի տվեց, ասաց. «Պապի՛, ա՛ռ, քելի պազար, այինոյին առ, բե՛ր»:

Կնիկը զինքն էլավ, մտավ մի մուլթ պուճախ, սկսեց աչկերեն թափել, ասաց.— Աստվա՛ծ, իմ պալանները, իմ մարթը իշխո են, յարա՛պ, կո՞ւչտ են, քաղցա՞ծ են, ընձի մըտեղ չըխանիր, վար տեղ էլավ, իմ ըռուզկյան տվիր, իմ պալանների ըռուզկյան էլ տաս:

Ըշկաց, ի՞նչ, խալիվոր դռներն մտավ, էլավ այնոյին ձեռներն առավ, ասաց.— Պապե՛ ջան, էլ չէթաս ծովը՝ ճյունա խանեյլու, Աստըծու տված ըռուզկայով կապրենք:

Մեհառժամանակ մնաց էդ կնիկը, Ալոն, Ղարոն մալի տեր դարձավ, մե հավուզ շինել տվեց, մե ծառ էլ տնկել տվեց, Հյուր պատկերն էլ քյաչել տվեց, կպուցեց էտ ծառի վրան. մե դարավուլ էլ բռնեց, դրեց, ասաց.— Վեավ էկավ, ճյուր խմավ, ախ քյաչեց, կըբռնեք:

Օրերեն մեկ օր էն բազրկյանն էկավ, տըսավ պատկերքը, ախ քյաչեց: Ղարավուլը բռնեց, տարավ աղայի կուշտը:

Կնիյն էլավ տղամարթի չոր խաքավ, ելավ դյուս, իշկաց՝ ի՞նչ, էն բազրկյանն ի, ասաց.— Տարեք, մե լավ օթախ դրե՛ք:

Մե քյանի օրեն հետն էլ էն մեկէլ բազրկյանն էկավ, ճյուր խմեց, տըսավ պատկերքը, ասաց.— Իշխո էն կնիյն ըլի:

Ախ քյաչեց: Դեարն էլ բռնեց, տարավ աղայի կուշտը:

Ասաց.— Դեարն էլ տարե՛ք դեար կուշտը:

Մե վախտ էլ մնաց, էդ Սեֆիլ Մարկոսն էլի ընկյավ դառը աղքատության մեջ, էլավ. յուրը տվեց դարիպութոն, ասաց. «Իմ կնկյա անեծքն էր, որ ընձի բռնեց, մորթեյլու վախթն ասաց՝ խնայի՛ իմ պալաններին, ես դեարն անկաճ չարիմ, արդար արուն թափիմ, դեար սապապեն էլ ես կուշտ չեմ ուտելի»:

Էլավ, ընկյավ ճանբախ, շատ ու քիչ Աստված է գինա, էկավ, խասավ էդ հավուզի մոտը, ըշկաց էդ պատկերքին, ասաց. «Իշխո իմ կնիկն ըլի»: Ասաց, ուրը թըփեց գետինը, ախ քյաչեց:

Էդ դարավուլ տըսավ, դարմացավ, դեարը վերցեց, դոռով, դըռնչտելով տարավ Հյուր աղայի կուշտը: Աղան ըշկաց, որ Հյուր մարթն ի, ասաց. «Դեարն էլ տարե՛ք դեանց մոտը»:

Էկան, իրկունը քընան, լոսը բացվի ձեր վրա, բացվավ դեանց վրա: Առատունը էլան, կնիկը Հյուրը դաղային կանչեց, ասաց. «Յարի՛, էթանք էն մարթներին մոտը, տըսանք դեանք ի՞նչ մարթ են, որ էկան, հավուզեն ճյուր խման, ախ քյաչին»:

Էլան, գընացին էն մարթերի մոտը: Առաջի բազրկյանեն խարցուց:

— Ընչի՞ խըմա հավուզի ճյուրը խմար, ախ քյաչիր:

— Ես բազրկյան եմ էր, էկամ, էջամ մե մեշայի մեջ, էրկու աղունիկ տվիմ իմ կյատանների ձեռքը, մորթին, լվան, դեանք չուռ էկան, գդան մե բարակ առու, աղունիկները մորթեն, որ լվան էն էր, թե առիւր էն էր, թռերին էր, էկան ընձի ասին, օղորկիմ, գընացին, ի՞նչ, մե կնիկ մորթիր են, գնացիմ, վիզը ճխտիմ հիրար վրա, կնիկը փուշտաց, նստավ, ասաց. «Աղբե՛ր, ընձի ի՞նչ տեյին խանիր, քյո՞ւր

տեյին, մե՞ր տեյին, թե՞ կնիկ տեյին»։ Ես էլ ասիմ. «Նանհիմ, որ քեզ առնեմ»։ Կնիկն ասաց. «Ես Աստրծու առաջ ուխտ եմ արի, որ իմ խալալին խարամ չըխառնեմ, իմ մարթու խետ ուխտ եմ արի չանքի օրն գերեզմանին»։

Սեֆիլ Մարկոսը դեադ ուր մատը կծեց.—էդ իմ կնիկը կըլի,—ասաց։

Կնիկը խարցուց.—Պա՛, ի՞նչ արիր էն կնկյան։

—Թալիմ խորի մեջ,—ասաց բազրկյանը։

Կնիկ էս խետ մեկէլ բազրկյանին խարցուց.—Դյու ընչի՞ ճյուր խմար, ախ քյաչիր։

—Ես էլ էդ կնիկը էդ խորեն խանիմ, ընձ էլ ասաց. «Աղբե՛ր, ընձ ի՞նչ տեյին խանիր, քյո՞ւր տեյին, մե՞ր տեյին, թե՞ կնիկ տեյին»։ Ասիմ. «Կնիկ տեյին»։ Ասաց. «Ես իմ մարթու խետ վատա Աստծուն եմ արի, որ իմ խալալին խարամ չըխառնեմ, ընձի տար թա՛լ ծովը»։

—է՛, դու ի՞նչ արիր։

—Տարամ, թալիմ ծովը։

—է՛, խալիվո՛ր,—ասաց,—դո՛ւ ի՞նչ արիր։

—Ես էլ ծովեն խանիմ,—ասաց։

Ասաց.—Դյու ի՞նչ արիր էդ կնկյան։

—Դեարը արիմ ազիզ պալա,—ասաց։

Սեֆիլ Մարկոսին ասաց.—Ա՛յ մարթ, պա դու ընչի՞ ախ քյաչիր։

—Ի՞նչ ասեմ,—ասաց,—իմ վրա կրակ կըթափի, էն ես եմ էր մորթիմ մեշայի մեջը, էն իմ կնիյն էր, էկամ դեադ, դեար պատկերը տըսամ, ախ քյաչիմ։

Կնիյն էդ բազրկյաններին, էդ խալիվորին ասաց.—էդ կնիկը ես եմ էր, էդ էլ Սեֆիլ Մարկոսն ի իմ մարթը, Աստված ընձի լոս արաց, իմ մարթն ընձի խասուց։

Բազրկյաններին ասաց.—Աստված ձեզի հաջողութոն տա, դուք գընացե՛ք։

Բազրկյանները գընացին, կնիկը փաթըթվավ Սեֆիլ Մարկոսին, ասաց.—Ա՛յ մարթ, տըսա՞ր՝ քյո աչքովդ ինչ են էր ասելի էդ բազրկյանները, ես քյո խետ վատա Ասծու եմ դրի, իմ խալալին խարամ չեմ խառնի, ինչանք ի օրն գերեզմանին։

Նալիվորին ասաց.—Պապի՛ ջան, ես էթաս եմ իմ մարթի խետ իմ պալաների կուշտը, ի՞նչքամ կարգ եմ քցի քեզ, քեզ փեչքյաչ ըլի։ Ելավ, խալիվորի ձեռը պագեց, քյուրերին ասաց.—Մնաք բարի։ Ընկյան ճամբախ։

Մարթ ու կնիկ էկան, խասան յուրանց տունը։

Աստված լոս արաց դեանցը, լոս անի ամեն նեղածներին։